



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքրի, դրամական հոսքերի և Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Այբ» կրթական հիմնադրամի (Հիմնադրամ) 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին Օանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր հաշվետվության ընթերցումը, այդ իսկ պատճառով, չի փոխարինում Հիմնադրամի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2020թ. հունիսի 30-ի մեր աուդիտորական եզրակացությունում:



«Այբ» կրթական հիմնադրամ

Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ
Էջ 2

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով մեր այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (խմբագրված) «Հաշվետվության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի անդամ



KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 հունիսի 2020թ.